ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

375015, Երևան 15, Գրիգոր Լուսավորչի 13

№ 42 16 հունվարի 2002 թ.

Գագիկ Աբրահամյանին Երևանի քաղաքապետի 22.11.2001թ. հ.1455 որոշմամբ մրցույթով տրամադրված հողամասին կից հյուրատների շինարարության իրականացման նպատակով լրացուցիչ հողամաս տրամադրելու մասին

Հաշվի առնելով Գագիկ Աբրահամյանի հայտը, Քաբայան փողոցից մինչև 50-ամյակի հուշարձան ընկած «Հյուսիսային ճառագայթ»-ի նախագծային հատվածը սեփական միջոցներով կառուցելու նրա պատրաստակամությունը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 27.12.2001թ. հ.18-06/5304 եզրակացությունը.

1.Ղեկավարվելով << քաղաքացիական և հողային օրենսգրքերով, << կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշման 36 կետի «ա» ենթակետի համաձայն Գագիկ Աբրահամյանին (հետագայում կառուցապատող) Երևանի քաղաքապետի 22.11.2001թ. հ.1455 որոշմամբ մրցույթով տրամադրված հողամասին (պետական գրանցման հ.004687 վկայական տրված 20.12.2001թ.) կից հյուրատների շինարարության իրականացման նպատակով լրացուցիչ տրամադրել 5850,0քմ մակերեսով հողամաս վարձակալության իրավունքով, 70 տարի ժամկետով:

2.Սահմանել, որ հողամասերի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով:

3.Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» << օրենքի 17 հոդվածը և << կառավարության 29.10.98թ. հ.667 որոշումը հաստատել և կառուցապատողին հանձնել ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար հիմք հանդիսացող Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից մշակված ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

4.Լիազորել Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչությանը (Ա.Գևորգյան) Երևանի քաղաքապետի անունից հողօգտագործողի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը << քաղաքացիական օրենսգրքի համաձայն ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման << անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի լիազորված մարմնում:

5.Ընդունել ի գիտություն, որ.

5.1.Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության հետ 60-օրյա ժամկետում վարձակալության պայմանագիր չկնքելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.2.Ճարտարապետահատակագծային նախագծային փաստաթղթերի մշակման, համաձայնեցման և շինարարության թույլտվության հայտի ներկայացման համար սահմանված է մեկ տարի ժամկետ:

5.3.Ճարտարապետահատակագծային նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղա-